ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | N 01-Ն | *Տեսակը* | Հիմնական |
| *Տիպը* | Հրաման | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | ՀՀԳՏ 2011.04.15/8(391) Հոդ.155 | *Ընդունման վայրը* | Երևան |
| *Ընդունող մարմինը* | Գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ | *Ընդունման ամսաթիվը* | 25.02.2011 |
| *Ստորագրող մարմինը* | Գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ | *Ստորագրման ամսաթիվը* | 25.02.2011 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 25.04.2011 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

⊞ Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՀՐԱՄԱՆԸ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

25 փետրվարի 2011 թ. N 01-Ն
ք. Երևան

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ 1039-Ն որոշմամբ հաստատված բույսերի պաշտպանության միջոցների պետական գրանցման կարգի 8-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1731-Ն որոշման 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1730-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կանոնադրության 15-րդ կետի 1-ին ենթակետը՝

***Հրամայում եմ՝***

1. Հաստատել բույսերի պաշտպանության միջոցի գրանցման վկայագրի ձևը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Ա. Ղարիբյան**

**Հավելված**
**ՀՀ գյուղատնտեսության**
**նախարարության սննդամթերքի**
**անվտանգության պետական**
**ծառայության պետի**
**2011 թվականի փետրվարի 25-ի**
**N 01-Ն հրամանի**

*Ձև*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր
## ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ ԳՐԱՆՑՄԱՆ

N ______

Սույն վկայագիրը տրվում է ________________________________________________

կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը

__________________________________________________________________________ -ին

Համաձայն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի

«___»___________20__թ. N____ հրամանի_________________________________

բույսերի պաշտպանության միջոցի անվանումը

թունանյութը գրանցված է բույսերի պաշտպանության միջոցների պետական գրանցամատյանում՝

N_____________ և ընդգրկված է Հայաստանի Հանրապետությունում օգտագործման

գրանցման համարը

համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների անվանացանկում:

«___» ____________ 20__ թ.

**ՀՀ գյուղատնտեսության նախարարության**
**սննդամթերքի անվտանգության**
**պետական ծառայության պետ** ________________________

ստորագրություն

Կ. Տ.